
ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐՄԵՆ ԹԱՌՈՅԱԼ

Տնտեսական կայուն աճը, գլոբալացումը, քաղաքացիական և տեղեկատվական հասարակությունը XXI դարի առավել բնութագրական հասկացություններից են: Այնուամենայնիվ, դրանք չեն կարող ծառայել որպես համապարփակ բնութագրիչներ սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ գործընթացների նոր շրջափուլերը գնահատելու համար: Քաղաքական, հասարակական և գիտական աշխարհի շատ ներկայացուցիչներ հակված են կարծելու, որ այդ շրջափուլի էությունը ավելի ճիշտ է արտացոլում «ինովացիոն զարգացում» հասկացությունը: Այդպիսի մոտեցումը հասկանալի է, քանի որ ինովացիաները դարձել են ժամանակակից տնտեսության կարևորագույն բաղադրիչներից մեկը, այն աստիճանը, որի վրա հենվելու դեպքում կարելի է բարելավել մեր կյանքը և կառուցել կայուն, էկոլոգիապես անվտանգ ապագա: Ըստ այդմ կարելի է ասել, որ ինովացիաների թեման ժամանակակից տնտեսագիտական մտքի համար թերևս ամենաարդիականն է:

Ինովացիոն զարգացումը ենթադրում է անցում դեպի ինովացիոն տիպի տնտեսություն: Թեև ինովացիոն տնտեսության միջուկը կազմող ազգային ինովացիոն համակարգը աշխարհի շատ զարգացած երկրներում ստեղծվել է դեռևս XX դարի վերջին, «ինովացիոն տնտեսության» տեսական կառուցվածքը մինչև հիմա շատ հետազոտողներ դասում են ոչ լիարժեք սահմանված հասկացությունների շարքին: Տվյալ հասկացության հայեցակարգային անորոշությունը նպաստում է, որ ինովացիոն զարգացման հիմնախնդիրներին նվիրված մի շարք աշխատանքներում ինովացիոն տնտեսությունը հաճախ ամբողջությամբ նույնացվում է տնտեսությունների այլ տիպերի հետ (գիտելիքների տնտեսություն, նոր տնտեսություն, նոուֆերային տնտեսություն, հետինդուստրիալ տնտեսություն և այլն): Որոշ տնտեսագետներ փորձում են գծել ինովացիոն և տնտեսության այլ տիպերի համընկման սահմանները: Օրինակ՝ ռուս տնտեսագետ Վ. Վ. Իվանովը կարծում է, որ «գիտելիքահենք տնտեսությունը ինովացիոն տնտեսության բարձրագույն մակարդակն է»¹:

Անկախ տերմինից՝ ներկայումս գիտնականների մեծ մասն ընդունում է, որ փոխվել է վերարտադրության տիպը, և ժամանակակից հասարակության ձևավորման հիմնական համաաշխարհային միտումն է հունքային և ինդուստրիալ տնտեսությունից անցում տնտեսության այնպիսի տիպի, ո-

¹ **Иванов В. В.** Роль национальной инновационной системы в формировании экономики постиндустриального общества / Инновационные ресурсы России и государственных участников СНГ. М., 2005, с. 12-14.

րը հիմնվում է ինովացիաների, մտավոր ռեսուրսների, գիտատար և տեղեկատվական տեխնոլոգիաների վրա: Ջարգացման ինովացիոն տիպին հատուկ է այն, որ նորամուծությունների և փոփոխությունների ազդակները ծնվում են համակարգի միջոցով և տեղակայվում են նրա ներսում: Ջարգացման ինովացիոն տիպի ժամանակ որպես տնտեսական աճի պայման հանդես է գալիս արտադրության մտավորականացումը, տնտեսական աճի նպատակը դառնում է ազգային հարստության մեջ այնպիսի բաղկացուցիչների բացարձակ և հարբերական բարձրացումը, որոնք նախկինում դասվում էին, այսպես կոչված, ոչ տնտեսական գործոնների շարքին: Բացի այդ, տնտեսական աճի արդյունավետության չափանիշներից մեկը դառնում է մարդկային կապիտալի կուտակման վրա ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների ծախսերի ավելացումը²:

1990-ական թվականների երկրորդ կեսից սկսած՝ Տնտեսական համագործակցության և զարգացման երկրների (ՏՀԶԿ) գերակշիռ մասի համար ընդհանուր միտում դարձավ հետազոտությունների ու նշակումների (ՀուՄ) համախառն ներքին ծախսերի կշռի ավելացումը ՀՆԱ-ում (տես աղյուսակ 1): Այդ ցուցանիշը ԱՄՆ-ի համար 2008 թ. հասավ 2,77%-ի, 2007 թ. տվյալներով եվրոպական երկրների և ճապոնիայի³ համար համապատասխանաբար՝ 1,77% և 3,44%: ՀՆԱ նկատմամբ ՀուՄ համախառն ներքին ծախսերի կշռով եվրոպական երկրների շարքում առաջատարները Շվեդիան և Ֆինլանդիան են (2008 թ.-ին՝ համապատասխանաբար 3,75% և 3,49%): Տվյալ ցուցանիշի գծով աշխարհում առաջատարը Իսրայելն է՝ 4.76%:

Աղյուսակ 1

ՀուՄ համախառն ներքին ծախսերը ՀՆԱ նկատմամբ (%ով)

Երկրի անվանումը	1995	2004	2005	2006	2007	2008
Ավստրալիա	-	1.78	-	2.06	-	-
Ավստրիա	1.55	2.26	2.45	2.47	2.54	2.67
Բելգիա	1.67	1.86	1.83	1.86	1.90	1.92
Կանադա	1.70	2.08	2.05	1.97	1.90	1.84
Չեխիա	0.95	1.25	1.41	1.55	1.54	1.47
Ղանիա	1.82	2.49	2.46	2.48	2.55	2.72
Ֆինլանդիա	2.27	3.45	3.49	3.45	3.48	3.49
Ֆրանսիա	2.29	2.15	2.10	2.10	2.04	2.02
Գերմանիա	2.19	2.49	2.49	2.53	2.53	-
Հունաստան	0.43	0.55	0.59	0.58	0.58	-
Հունգարիա	0.72	0.87	0.95	1.00	0.97	-
Իսլանդիա	1.53	-	2.77	2.99	2.70	2.65
Իռլանդիա	1.26	1.23	1.25	1.25	1.28	1.43
Իտալիա	0.97	1.10	1.09	1.13	1.18	1.18
Ճապոնիա	2.92	3.17	3.32	3.41	3.44	-

² Стен Инновационный путь развития для новой России / отв. Пред. В. П. Горегляд; Центр социально-экономических проблем федерализма Института экономики РАН. М., 2005, с. 14:

³ Մանրամասն տես James R. S., Yokoyama T. Upgrading Japan's Innovation System to Sustain Economic Growth. Economic Department OECD, Working Paper No. 527/ECO/ (2006) 55/29-Nov-2006, էջ 5:

Կորեա	2.27	2.68	2.79	3.01	3.21	-
Լյուքսեմբուրգ		1.63	1.56	1.65	1.57	1.62
Մեքսիկա	0.28	0.40	0.41	0.39	0.38	-
Նիդեռլանդներ	1.97	1.81	1.79	1.78	1.71	-
Նոր Զելանդիա	0.95	-	1.16	-	1.21	-
Նորվեգիա	1.69	1.59	1.52	1.52	1.64	1.62
Նեհաստան	0.63	0.56	0.57	0.56	0.57	0.61
Պորտուգալիա	0.54	0.77	0.81	1.02	1.21	1.51
Սլովակիա	0.92	0.51	0.51	0.49	0.46	0.47
Իսպանիա	0.79	1.06	1.12	1.20	1.27	1.35
Շվեդիա	3.26	3.62	3.60	3.74	3.61	3.75
Շվեյցարիա	-	2.90	-	-	-	-
Թուրքիա	0.28	0.52	0.59	0.58	0.72	
Մեծ Բրիտանիա	1.91	1.69	1.73	1.76	1.82	1.88
ԱՄՆ	2.50	2.54	2.57	2.61	2.66	2.77
ԵՄ 27	1.66	1.73	1.74	1.76	1.77	-
ՏՀԶԿ ընդամենը	2.05	2.17	2.21	2.24	2.28	-
Արգենտինա	-	0.44	0.46	0.50	0.51	-
Չինաստան	0.57	1.23	1.34	1.42	1.44	-
Իսրայել	2.57	4.26	4.37	4.41	4.76	4.86
Ռումինիա	0.80	0.39	0.41	0.45	0.52	0.59
Ռուսաստան	0.85	1.15	1.07	1.07	1.12	1.04
Սինգապուր	1.15	2.19	2.28	2.27	2.52	
Սլովենիա	1.53	1.40	1.44	1.56	1.45	1.66
Հարավաֆրիկյան Հանրապետություն	-	0.86	0.92	0.95	-	-

Աղբյուրը՝ OECD, Main Science and Technology indicators database, December 2009

Մեր կարծիքով, ինովացիոն զարգացման ոլորտում միջազգային փորձի օգտագործման տեսանկյունից Հայաստանի համար ուսանելի կարող է լինել հատկապես եվրոպական փոքր երկրների անցած ճանապարհը՝ համակցելով այն Հարավարևելյան Ասիայի որոշ երկրների իրականացրած տնտեսական աճի՝ «արտահանման կողմնորոշմամբ» մոդելի հետ:

Եվրոպական ոչ մեծ երկրների ինովացիոն զարգացման փորձը ցույց է տալիս, որ հնարավոր է ինովացիոն սեկտորի ինտենսիվ զարգացում նաև երկրի ներսում պահանջարկի սահմանափակումների պայմաններում: Այդ առումով եվրոպական ոչ մեծ երկրների ինովացիոն զարգացման փորձը ինովացիոն ակտիվության նկատմամբ սահմանափակ ներքին պահանջարկի պայմաններում օգտակար է Հայաստանի ՀՈԱ ոլորտի զարգացման հեռանկարների գնահատման համար:

Եվրոպական փոքր երկրները գնացին տեխնոլոգիաների աճող միջազգայնացման և գլոբալացման օգտագործման ճանապարհով՝ կատարելագործելով իրենց գիտելիքների ազգային մակարդակը, զարգացնելով ազգային ձեռնարկությունները: Այդ գործընթացում կենտրոնական դեր են խաղում անդրազգային կորպորացիաները և օտարերկրյա ուղղակի ներդրումները, քանի որ ինովացիոն ակտիվությունը և ՀՈԱ ծախսերի կրճատումը ոչ մեծ երկրներում ունեն օբյեկտիվ բնույթ (փոքր շուկան թույլ չի տալիս ձեռնարկություններին փոխհատուցելու բարձր և բարձրացման մի-

տում ունեցող ՀուՄ ծախսերը հատկապես ապրանքի կենսացիկլի կրճատման և մրցակցության աճի պայմաններում):

Որպես արդյունք ՀուՄ ակտիվ օգտագործող ոչ մեծ երկրների ֆիրմաները ունեն արտահանման և արտաքին ուղղակի ներդրումների կարիք: Այդ առումով տեխնոլոգիաների միջազգայնացման փորձը փոքր երկրների ազգային ֆիրմաների համար պայմանավորված չէ ազգային ինովացիոն համակարգերի թուլությամբ, այլ ներքին ինովացիոն շուկայի փոքրության հետևանք է:

Տնտեսական աճի «արտահանման կողմնորոշման» մոդելը ինովացիոն տնտեսության կառուցման նախադրյալ է: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 1995-2008 թթ. Հայաստանում տնտեսական միջին տարեկան աճը կազմել է 9%, ընդ որում՝ 2001-2007 թթ. համար տարեկան տնտեսական աճի միջին ցուցանիշը կազմել է 13%: 2008 թ. բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 3689 ԱՄՆ դոլար⁴: Սակայն Հայաստանում 2008 թ. տնտեսական աճի տեմպերը նախորդ տարիների համեմատ էապես դանդաղեցին: Արդեն տարվա վերջին եռամսյակում տնտեսությունը սկսեց կրել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը. արդյունքում տարեկան աճը կազմեց ընդամենը 6,8%⁵: 2009 թ. Հայաստանում արձանագրվեց ավելի քան 14% տնտեսական անկում⁶:

1995-2008 թթ. տնտեսական աճ գրանցվել է տնտեսության գրեթե բոլոր հատվածներում, սակայն առավել բարձր ցուցանիշներ արձանագրել են շինարարության և ծառայությունների ճյուղերը: Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2001-2008 թթ. շինարարության աճի միջին տարեկան տեմպը կազմել է 19.6%, որի հետևանքով շինարարության ճյուղի ՀՆԱ-ի կշիռը մոտ 10%-ից հասել է 27%-ի: Շինարարության ճյուղն ապահովել է տնտեսական աճի շուրջ 1/3-ը, ավելի շատ, քան արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը միասին վերցրած: Հարկ է նշել, որ տնտեսական աճը հիմնականում ապահովել են ներմուծմանը փոխարինող ճյուղերը, որոնք ներքին փոքր շուկայի պատճառով ունեն սահմանափակ հնարավորություն: Դրանք հնարավոր չէ անընդհատ ընդլայնել, և վաղ թե ուշ ներքին շուկայի ընդլայնումը կդադարի տնտեսական աճի շարժիչ ուժ լինելուց: Հայաստանը արտահանում է սահմանափակ անվանացանկով արտադրանք: Արտահանման մեջ մեծ բաժին են կազմում հումքային ռեսուրսները: Արտահանման կառուցվածքի ցածր դիվերսիֆիկացման մակարդակը և նրա կախվածությունը հումքային ռեսուրսներից տնտեսական զարգացումը դարձնում են անկայուն:

⁴ Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգրքեր», 2009, 2004, 2001 (1999-2000), 2001 (1996-1998), Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին», հրատարակվել է 30 հունվարի 2009, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին», հրատարակվել է 01 փետրվար 2010, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների հարաբերական ծավալները բավականին փոքր են: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների՝ 2000-2008 թթ. ընթացքում դրանց ներհոսքն ընդհանուր առմամբ կազմել է շուրջ 3 միլիարդ ԱՄՆ դոլար կամ տարեկան ՀՆԱ-ի միջինի մոտ 6%-ը⁷: Այս ներդրումները հիմնականում ուղղվել են տրանսպորտի և կապի, գունավոր մետալուրգիայի, հանքագործության, սննդի արտադրության, շինարարության և ծառայությունների ոլորտի զարգացմանը: Միաժամանակ հարկ է նշել, որ անցած տարիներին տնտեսական աճի համար մեծ նշանակություն են ունեցել մասնավոր տրանսֆերտները, որոնք 2008 թ. տվյալներով կազմել են ՀՆԱ-ի 9%-ը⁸: Ըստ փորձագիտական գնահատականների՝ վերջին տարիներին Հայաստանի տնային տնտեսությունները արտերկրից տարեկան ստացել են մոտ 1,5 միլիարդ ԱՄՆ դոլարի մասնավոր դրամական փոխանցումներ:

Այսպիսով, Հայաստանի տնտեսական աճը չափից ավելի կախվածություն է ունեցել շինարարությունից և մասնավոր տրանսֆերտներից, տնտեսությունը կառուցվածքի տեսանկյունից ունի բավականին ցածր դիվերսիֆիկացիայի (տարատեսակացում, բազմազանացում) մակարդակ, արտահանումը փոքր է և ունի որակական թույլ բնութագրիչներ: Այս բոլոր գործոնները միասին չեն կարող ապահովել երկարաժամկետ կայուն տնտեսական աճ, առավել ևս՝ զարգացում և խոցելի են դարձնում մեր երկրի տնտեսական համակարգը: Դա ակնառու դրսևորվեց 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ⁹:

Երկարաժամկետ կտրվածքով երկրի կայուն տնտեսական աճի ապահովումը կախված է տնտեսական աճի որակական բնութագրիչներից: Հայաստանի ներքին շուկան խիստ փոքր է, ուստի տնտեսական զարգացում ունենալու համար արտահանման կողմնորոշումն այլընտրանք չունի: Հետևաբար, ինչպես արտահանման ծավալի, այնպես էլ կառուցվածքի բարելավումը Հայաստանի տնտեսության ներկայիս ամենաալուրջ մարտահրավերն է:

Միայն ներքին շուկա կողմնորոշումը և ներմուծման փոխարինումը սահմանափակում են նաև երկրի տեխնոլոգիական զարգացումը: Ներքին շուկայի փոքր չափերը թույլ չեն տալիս նաև ամբողջությամբ օգտագործելու ներդրվող բարձր արտադրողական և թանկարժեք տեխնոլոգիաները և իրացնելու արտադրանքի անհրաժեշտ ծավալ ազգային շուկայում իրականացված ներդրումները ծածկելու նպատակով:

Գիտատեխնիկական գործունեության արդյունքների գնահատման կարևոր ցուցանիշ է բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանումից ստացված մուտքերի և այլ երկրներից տեխնոլոգիաների գնման համար վճարների հարաբերակցությունը, այսինքն՝ առևտրային տեխնոլո-

⁷ Տե՛ս «Ներդրումային քաղաքականություն», ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, <http://www.mineconomy.am/upload/file/pdfs/INVESTMENTSarm.pdf>

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին», հրատարակվել է 30 հունվարի 2009, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

⁹ Մանրամասն տե՛ս «Հայաստանի տնտեսական զեկույց 2009, ճգնաժամից դեպի նոր զարգացում», ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:


գիական հաշվեկշռի սալդոն և մուտքերով վճարումների ծածկման գործակիցը: Տվյալ ցուցանիշները ցույց են տալիս երկրի կիրառական գիտական նվաճումների միջազգային ճանաչման մասշտաբները և երկրում տեխնոլոգիաների զարգացման մակարդակը:

Չնայած վերջին տարիներին տնտեսական աճի գրանցված երկնիշ ցուցանիշներին՝ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման ծավալները դեռևս կազմում են Հայաստանի արտահանման ընդամենը 1%-ը (2008 թ. դրությամբ), որից գիտական սարքավորումներին բաժին է ընկել 44,1%-ը, քիմիական նյութերին՝ 19,9%-ը, էլեկտրոնիկա-հեռահաղորդակցման արտադրանքին՝ 13,9%-ը և այլն (տես պատկեր 1):

Պատկեր 1

Հայաստանի բարձր տեխնոլոգիաների արտահանման ինդեքսի կազմը և բաշխումը ըստ ապրանքային խմբերի 2008 թ.

- գիտական սարքավորումներ
- քիմիական նյութեր
- էլեկտրոնիկա-հեռահաղորդակցման արտադրանք
- ավիատիեզերային սարքավորումներ
- ոչ էլեկտրոնային սարքավորումներ
- էլեկտրոնային սարքավորումներ
- գեղագործական արտադրանք
- համակարգիչներ, գրասենյակային արտադրանք



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման այսպիսի պատկերը ցույց է տալիս, որ Հունիս-ը Հայաստանում չի նպաստում առևտրայնացված բարձր տեխնոլոգիական ապրանքների ստեղծմանը: Ավելին, ցածր է նաև բարձր տեխնոլոգիաների ներմուծումը (2002-2008 թթ. միջինը ընդհանուր ներմուծման 5-8%): Դա նշանակում է, որ սահմանափակ է նաև նոր տեխնոլոգիաների ներմուծման միջոցով տեղայնացվող նորարարությունը: Այսպես, ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2008 թ. համակարգիչները, էլեկտրոնիկան և հեռահաղորդակցման պարագաները կազմել են Հայաստան ներմուծվող բարձր տեխնոլոգիական ապրանքների 74%-ը, մինչդեռ բարձր տեխնոլոգիական մեքենասարքավորումների բաժինը կազմել է ընդամենը 2%:

Անցած դարի 80-ական թվականներին Արևելյան Ասիայի մի շարք զարգացող երկրներ (Հարավային Կորեա, Սինգապուր և այլն) դիվերսիֆիկացրեցին արտահանման կառուցվածքը՝ իրականացնելով արտահանմանը կողմնորոշված քաղաքականություն: Այդ երկրները որոշակի փուլում հրա-

ժարվեցին ներմուծման փոխարինման քաղաքականությունից և անցան արտահանման խրախուսման քաղաքականությանը, ինչը նրանց համար ապահովեց հետագա կայուն և հաստատուն սոցիալ-տնտեսական զարգացում: Իսկ ահա Լատինական Ամերիկայի այնպիսի երկրներ, ինչպիսիք են Մեքսիկան և Բրազիլիան, պահպանեցին ներմուծման փոխարինման գերակայությունը: Ընդ որում՝ Լատինական Ամերիկայի երկրները ներմուծման փոխարինման ճյուղերը զարգացրին շուկայական մրցակցության հաշվին վարչական և սակագնային արգելքների օգնությամբ: Սակայն այդ քաղաքականությունը ոչ մի կերպ չնպաստեց տնտեսության ճյուղերի դիվերսիֆիկացմանը և արդիականացմանը բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ: Ընդհակառակը, ներմուծմանը փոխարինող ընկերությունները սկսեցին ակտիվորեն իրականացնել լոբբիստական գործունեություն՝ ուղղված ներմուծումը փոխարինելու քաղաքականության շարունակմանը:

Ժամանակակից գլոբալացման պայմաններում արտահանման ռազմավարությունը ի վերջո ենթադրում է անցում դեպի զարգացման ինովացիոն ճանապարհ՝ «աճի բևեռների» որոշմամբ: Դա նշանակում է պատասխանել հետևյալ հարցերին՝ ի՞նչ ճյուղեր է անհրաժեշտ զարգացնել առաջին հերթին և ի՞նչ արտադրանք թողարկել, որպեսզի համաշխարհային շուկայում այն լինի մրցունակ:

Հարավարևելյան Ասիայի որոշ երկրներում արտադրության արագ աճը տեղի ունեցավ այն ճյուղերի ձևավորման հաշվին, որոնք բնորոշ չէին այդ երկրների համար, այսինքն՝ տնտեսության կառուցվածքի կտրուկ փոփոխության հաշվին: Սակայն աճի բևեռների որոշման համար անհրաժեշտ է տնտեսության կառուցվածքային արագ վերակառուցման քաղաքականության իրականացում: Աճի բևեռները պետք է նվազագույնի հասցնեն առևտրի անհաշվեկշռվածությունը և տան բարենպաստ երկրորդական էֆեկտ այն հաշվով, որ գերակա ճյուղերը նպաստեն տնտեսության այլ ճյուղերում արտադրության արդյունավետության բարձրացմանը: Աճի բևեռների որոշմանը հաջորդում են արդյունաբերական քաղաքականության մշակումը և դրա իրականացումը, իսկ զարգացման հաջորդ փուլում տեղի են ունենում հին, անարդյունավետ, շուկայական տնտեսության պահանջները չբավարարող արտադրությունների փակում և լուծարում: Այնուհետև շարունակվում է տնտեսության ժամանակակից մրցունակ հատվածների զարգացումը: Այդ հատվածներում աճը փոխհատուցում է անկումը լուծարված արտադրություններում՝ ապահովելով ՀՆԱ կայունությունը: Առավել արդյունավետ արտադրությունների աճի տեմպը գերազանցում է արտադրության անկման տեմպերը նախկին կարողություններում: Հենց այդպիսի ճանապարհ են անցել Հարավային Կորեան և Ճապոնիան, որոնց ուսանելի փորձի արմատավորումը ենթադրում է գիտագործնական համալիր ծրագրի մշակում և գործադրման իրական նախադրյալների (ոչ կարգախոսների) ստեղծում:

Այդ նպատակով պահանջվում է ըստ ռեսուրսների և ժամկետների փոխկապված վերափոխումներ հետևյալ ուղղություններով.

ա) Հայաստանի մարդկային ներուժի զարգացում, ներառյալ բնակչության աճի խթանում, բնակչության կրթական մակարդակի բարձրացման համար տնտեսական և սոցիալական պայմանների ստեղծում, անընդհատ կրթության հիմնախնդրի լուծում:

բ) Բարձր մրցակցային ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծում, ինչը խթանում է ձեռնարկատիրական ակտիվությունը և տնտեսությունում կապիտալի ներգրավումը, այդ թվում՝ ֆինանսական, տեղեկատվական և այլ ռեսուրսների նկատմամբ կազմակերպությունների մուտքի պայմանների բարելավումը:

գ) Տնտեսության կառուցվածքային դիվերսիֆիկացիա ինովացիոն տեխնոլոգիական զարգացման հիմքի վրա, այդ թվում՝

- ազգային ինովացիոն համակարգի ձևավորում, ինչը կապահովի բարձրագույն կրթության և գիտության արդյունավետ ինտեգրումը,

- հզոր գիտատեխնոլոգիական համալիրի ստեղծում, ինչը կնպաստի ըստ գերակա ուղղությունների գիտական հետազոտություններում և տեխնոլոգիաներում Հայաստանի համար նոր դիրքերի ձեռքբերմանը և ամրապնդմանը,

- օժանդակություն տնտեսության առաջատար ճյուղերի մրցունակության բարձրացմանը՝ պետություն-մասնավոր գործընկերություն մեխանիզմների օգտագործման, երկարաժամկետ ներդրումների աղբյուրների նկատմամբ ձեռնարկությունների մուտքի պայմանների բարելավման, տնտեսության ճյուղերը բարձր պրոֆեսիոնալ կադրերով (մենեջերներով, ինժեներներով և աշխատուժով) ապահովելու և բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանք արտահանելու ճանապարհով:

Տնտեսության ինովացիոն զարգացումը պահանջում է ազգային ինովացիոն համակարգի հետևողական ձևավորում հետևյալ քայլերով.

• ինովացիոն զարգացման ծրագրային հենքի ապահովում և իրականացման հետևողական վերահսկում,

• օրենսդրական նպաստավոր հենքի ձևավորում և շարունակական կատարելագործում,

• ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում,

• միջազգային ինովացիոն համագործակցության խթանում,

• վենչուրային կապիտալ ներգրավելու գործուն մեխանիզմների արմատավորում,

• ինովացիոն կազմակերպությունների գործունեության խթանում և աջակցություն:

Այսպիսով, Հայաստանի ընթացիկ ինովացիոն ներուժի մասին վերը բերված գնահատականները թույլ են տալիս եզրակացնելու, որ ինչպես տնտեսության ընթացիկ ճգնաժամային վիճակի հաղթահարման, այնպես էլ Հայաստանի տնտեսությունը «ինովացիոն ռելսերի» վրա փոխանցելու ճանապարհին գոյություն ունեն բազմաթիվ բարդություններ, որոնք հնարավոր է հաղթահարել միայն նպատակաուղղված ինովացիոն քաղաքականություն իրականացնելու միջոցով:

АРСЕН ТАРОЯН – Проблемы и перспективы формирования инновационной экономики в РА. – Формирование инновационной экономики – одна из важнейших задач на современном этапе развития нашей страны. Для её решения следует использовать международный опыт, в частности путь, пройденный малыми странами Европы, одновременно сочетая его с ориентированной на экспорт моделью экономического роста, реализованной некоторыми государствами Юго-Восточной Азии. В статье определены основные направления связанных между собой реформ, их ресурсы, сроки проведения, а также приоритетные шаги, посредством которых должна сформироваться национальная инновационная система.

ARSEN TAROYAN – Problems and perspectives for forming innovative economy in the RA. – The present paper considers the problem of establishing innovative economy at the present stage of the economic development in the Republic of Armenia. In the innovative development sector, European small countries can be a good example for Armenia in terms of international experience. In the process of building innovative economy in Armenia, it will be useful to consider this experience. At the same time, it is essential to combine it with the model of "export orientation" implemented by some countries in South-East Asia. In this respect, such fundamental trends as resources, the period of interconnected alterations, have preliminarily been outlined, followed by initial steps to shape the National Innovation System.